

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԳՐԱՏԱՐԱԿԻՋ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Դր 2



ՏՊԱԳՐԻՋ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ





THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO
PHYSICS DEPARTMENT

1900

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

1900

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՀԱՆՐԻՍ هازا كيداغ HANRAKIDAG
ՀԱՐԱԹԱԿԱՆ مجموعہ علوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 2 || 10 ՅՈՒՆԻՍԱՐ 1904

ԴԵՌԱՏԻ ՄԱՅՐԻԿԸ

(ՊԱՏԿԵՐ)

ՏԻԿԻՆ Փ. ՀԱՋԱՐԱՊԵՏԵԱՆԻՆ



Քնքուչիկ ու պճնոտ շղարչներով՝ փափկօրէն փաթթուած կենդանի առեղծուած մը, մինիկ հանելուկ մը, որ իր զեփիւռի շընչառութիւնով՝ նոր մթնոլորտ մը կը ծաւալէ դեռատի մայրիկին սնարին վերեւ, ուր կը փութամ:

Բացած եմ այլ եւս դէմքը՝ նորեկ հրեշտակին: Անուշիկ մրափին սթափում մը, ճլուլըուն ճիչ մը. եւ անորոշ նայուածքներ՝ բնազդային սեւեռումներով: Գիշերը՝ պլպլուն լամբարին շուրջը կը թափառին այդ նայուածքները, եւ ցերեկը՝ մօտիկ ձայներուն ու շարժումներուն շարժառիթը կը հետապնդեն: Ի՞նչ կը զգայ, ի՞նչ կը խորհի արդեօք, անկարելի է գիտնալ:

Տաքուկ համոյրներով կ'ուզեմ թարգմանել սրտաբաղդի սէրս՝ դէպի այս մատղշուկ մանկիկը, որ բառերու նշանակութիւնը ճանչնալէ շա՛տ հեռի է դեռ: Ան՝ մի եւ նոյն մեղոյչ ակնարկներն է որ կը թարթէ, պլպստուն աչուկներուն խորերէն: Հակած կը մնամ, երկա՛ր ատեն, մանրօրէն քննելով իր դիմագծերն որոնք անցեալին մշուշներէն՝ յիշատակներ կ'արթնցնեն հետզհետէ: Տարիներ առաջ, յարեւմտան պճըլիկի մը առաջին վայրկեան-

ներն ողջունած եմ, ու նոյն գուրգուրանքով փայփայած՝ նորա-
փթիթ եղբայրիկի մը մանկութիւնը... Հիմա՝ լուսանկարը մի-
այն մնացած է ինծի, կարօտի պասուքի իբր ամօքիչ, ու բարա-
խուն յոյս մը, թէ, ա՛յսքան տարիներու սպասումը կարճ
միջոց մ'ունի մնացորդ, եւ թէ, բաղձալի՜ հեռապատկեր, պիտի
կրնամ ողջունել վերադարձի արշալոյսը, ողջագուրանքի կազ-
դուրիչ համրոյրներուս մէջ պարուրելով երբեմնի մշտաժպիտ ման-
կիկը, այլ եւս վառվռոն երիտասարդ մը դարձած, զարգուն ու
զուարթուն:

Ժամանակը, իր սրընթաց գնացքովն հանդերձ, ո՛րքան ալ
դանդաղ ու յամրաշարժ կը թուի հակադիր պարագաներու ոլորը-
ներուն մէջ, Ա՛հ, հապա անակնկալներ, որոնց վրայ խորհիլն
իսկ սարսուռ կը պատճառէ, երբ ա՛յսքան աղուորիկ յոյսերու մէջ
կ'օրօրուիմ: Գիրկս առած՝ խորհուրդներու, յոյսերու այն անձկա-
ցած փնջիկը, համակ թրթռում ու փթթում, Բայց օրերու շա՛տ
աւելի լայն անջրպետ մը կը տարածուի դէպի ապառնին, երբ
մտովի կը սիրեմ հարցնել թէ պիտի գա՞յ այն օրն ալ, ուր այս
անբարբառ քերովբէն եւս թրթռուն դեղձանիկի մը դայլայլիկ-
ներովը կարենայ պատասխանել մեր պաշիկներուն:

* * *

Նախ մեղմօրէն սկսող ու հետզհետէ ստիպող չկշտի մը յանգող
իր ճիշերով՝ կը հասկցնէ ինծի դարձի պէտքը՝ դէպի մայրիկին
գիրկը, ուր պահ մըն ալ փարիլ կ'ուզէ կաթի կենսաբուլիս ծո-
րակներուն: Ա՛լ աշուկները փակելու շարժումներ կ'ընէ հիմա,
անունդի կարիքն ալ յագեցուցած՝ քիչ քիչ կը քնանայ վերջա-
պէս, մինչ ծծելու շրթնային շարժումները կը թուլնան տակաւ,
ու ինքնաբերաբար՝ բերանը կը բաժնուի ստինքէն: Դեռատի մայ-
րիկը, միշտ ժպտաշուրթ ու բերկրոտ, ճառագայթուն զուարթու-
թեամբ մը մասնակցելէ յետոյ՝ մեր պահիկ մ'առաջնուան ասուլիս-
ներուն, հիմա ծայրայեղ զգուշութիւնով պիտի տեղաւորէ փափ-
կիկ հոգեհատորը, ջանալով որ չարթննա՞յ, եւ շարունակէ վա-
յելել քունի գերազանց հանգստութիւնը: Ու կը յաջողի զայն գե-
տեղել մանրիկ այն անկողնին մէջ, որ պարիկի գրգարան մը կը
թուի աւելի, ա՛յնքան զարգարուն, ա՛յնքան փափկագեղ, և կից՝
մայրական քնարանին:

Կը սկսինք մեր առաջնուան խօսակցութեան: Ուրախութեան
յորդառատ ցոլումներուն մէջ, խոսափուկ ամպ մը կ'անցնի դե-
ռատի մայրիկին դպմբէն. ամէն նորածնի սովորական եղող դար-
մանումի մը հարկ է եղեր ենթարկել այս հրեշտակիկը, որուն
քչիկ մը ցաւ ալ պիտի պատճատէ ասի: Մօրենական գորովը կը

ընդվիզի ասորիքէմ. «Ի՛նչպէս թողուլ որ ցաւին կսկիծը ճանչնայ նրբակազմ էակը, իր առջի օրերուն մէջ: Ուրիշ ճար չկայ արդեօք: »

Հրա՛շք... Անցեալի միամիտ մանկուհին՝ լրջացած, լիովին փոխուած է իր նոր դերին մէջ: Գրոջական խանդակաթ սիրոյն քով, որուն կը պարտիմ ավտիանքներու անմոռաց շարք մը, հիմա բողբոջած է նաև մայրական անձնութեան անմեռուկը: Ինծի հետ՝ դարձեալ կը սկսի գբաղիլ քնացող զուարթունին ինքնութիւնովը: Կը դիտենք միասին՝ անոր նոնոչիկ նիւհումը. ինքը ցոյց կուտայ նրբանուրբ դիմագծերուն թելադրիչ նմանութիւնը՝ բացակայ սիրելիի մը մանկութեան, անհուն գորովանք մը թրթռաացնելով ձայնին ու շարժումներուն մէջ մի ելեւէջներուն մէջ:

Ժամերը կ'անցնին այսպէսով, մինչեւ որ ուրիշներ կուգան ջվերջակիտել մեր երանաւէտ յափշտակութիւնը՝ յոյսերու եւ յոյգերու աշխարհին մէջ: — Մանկիկին մեծ մայրիկը՝ կուգայ քիչ մըն ալ ինք վայելել թոռնիկին տեսքը, եւ բարեպաշտ ծերունիի ջերմեռանդ մաղթանքներով կը համեմէ մեր փոխադարձ խնդակցութիւնները. — Տէ՛րը պահէ, բարի զաւակ ըլայ: — Բարի՛ եւ բարեբա՛խտ ալ ըլլայ, ըսի ես եւս, շեշտելով աւելցուցած վերջի բառիս վրայ, որու նշանակութիւնը լաւ կրնար հասկնալ որդեգորով մամիկը:

* * *

Դեռատի՛ մայրիկ, սրտանց քեզի կ'անդրադառնամ յաճախ, զմայլանքի համակում մը զգալով հոգւոյս ներսերը: Կը սքանչանամ այն քերթուածային դիւցազներգութեան վրայ, որ նոր կեանքիդ նուիրականութիւնը կը ցոլացնէ: Անցեալի յուշիկները փողփողուն շողերու խուրձով մը՝ ներկայի երջանկութեան կը լծորդուին, ապառնի գոհողութիւններու հեռանկարները՝ ծաղկաւէտ արահետի մը փոխարկելով: Կ'ըմբռնես անշուշտ խնամքներու եւ տքնութիւններու բովանդակ ծանրութիւնը, որ հիւլէի դիւրատարութիւնը հազիւ զգացած՝ մայրական սիրոյդ հանդէպ, առ ոչինչ կը գրես ամէն ինչ, ա՛յնքան գբաւուած ես գորովանքով: Բոլոր այս նուիրումներուն փոխարէն, տա՛ր Արարիչը, որ անակնկալներու վրդովիչ հանդիպումներէն զերծ՝ հրճուառիթ տարիներ միայն հոլովին, անզգալի դարձնելով ամէն յոգնութիւն: Ու մանաւանդ՝ միշտ կուրծքիդ վրայ եւ շուշիդ տակ՝ քենէ անբաժան մեծնայ այս մինիսիկ մանկիկը, բարի եւ բարեբախտ եւս լինելու համար, եւ ապագային, ա՛յն ատեն՝ երբ մայրիկ ու քեռի կը սիրեն ականատես ըլլալ իր կեանքի զարգուն շրջաններուն, ան՝ մանկութեան վերյուշումներով՝ ա՛լ աւելի բեղմնաւորէ երախտա-

գիտութեան ներազդումը, եւ յաճախ քեզի փարած՝ դաշներգէ քաղցրորէն:

Օրօրանիս մօտ նստած՝
Մայրի՛կս, անուշ երգելով,
Ինձ շա՛տ անգամ բուն ես արած՝
Խաչանեան կնիելով:

Ու մայրագորով բանաստեղծին սոսկ այս քառեակը բաւական պիտի ըլլայ արդէն ամենէն անկեղծ արտայայտութեամբ թարգմանելու՝ իր խորունկ գիտակցութիւնը՝ գերազանց գորովանքներուդ հանդէպ:

Համբարում

ԵՐԿՈՒՔՈՒԿԵՍ ՎԱՅՐԿԵԱՆ

ԾՈՎՈՒՆ ՄԷՋ

(ԳԻՏՈՒԿԱՆ ՎԻՊԱԿ)

Աշխարհագրութեան սիրահարներ անշուշտ կը յիշեն — եւ յիշելու ալ են — որ Մեռեալ ծովը Պաղեստինի հարաւային տրեւելեան կողմը կը գտնուի՝ երկար եւ ձուռձեւ. թէ արեւելքէն Մովաբ եւ արեւմուտքէն Քերթոն լեռներուն միջեւ զետեղուած է եւ թէ ուրիշ շատ մը մանրամասնութիւններու հետ (որոնց ամէնուն յիշատակութիւնը հոս զանց պիտի ընեմ) հարաւային արեւմտեան կողմը Սոդոմ անուն ընդծովեայ բլուր մը կայ, մեծ մասամբ աղի խաւով ծածկուած, որուն վրայ կը գտնուի կիրէ սիւն մը. որ մի քանի երկրաբաններ կը հաստատեն եւ կը սիրեն հաւատալ թէ Ղովտի կնոջ քարացած արձանն է:

Արդարեւ Ս. Գիրքը կը հաստատէ թէ Ղովտի կնոջ աղէ արձանի մը փոխակերպումը հաւանականաբար Սեգովրի չըջակայքը եւ կամ այդ քաղաքին մէջ տեղի ունեցած ըլլայ. բայց թէ ի՞նչպէս կարելի էր ցամաքին վրայ քարացած այդ արձանին՝ ծովուն մէջ փոխադրուիլը, եւ թէ իրօք էր այն կարծիքը թէ շատ մը դարերու հոլովումովը այդ ցամաքը տակաւ աներեւութանալով, դուն ըսէ մաշելով՝ Մեռեալ ծովուն մէկ մասը կը կազմէր: Անշուշտ այսպիսի հակասական եւ դեր ու դէմ կարծիքներու գոհացուցիչ եւ ճշգրիտ վայրկենական պատասխան մը տալ

յիմարական եւ միանգամայն ճշմարիտ ըլլալէ շատ ու շատ հեռու պիտի ըլլար: Այսպիսի կնճռոտ խնդիր մը լուրջ խուզարկութեան մը կը կարօտէր, ուսումնասիրութիւն մը՝ որ լուսամիտ խուզարկուի մը յամառ եւ խղճամիտ քննութեանց ենթակայ ըլլալէ վերջ՝ Սէմաթիկայի գիտական կաճառին սուջեւ պիտի կարդացուէր, գէթ այսպէս կ'ուղէին այսպիսի կարեւոր խնդիրի մը հրատարակումը:

Արդ, մի քանի անձեր, որոնց հետ ես ալ, տարակոյս յայտնեցինք օր մը այս խնդիրին նկատմամբ եւ չէինք ուզեր հաւատալ թէ այսպիսի յանդուգն տեսութիւն մը, անհիմն վճիռ մը ո՛րչափ ճշմարիտ կրնար ըլլար: Ներկաներէն գրեթէ ամէնքն ալ երկրարանութենէ քիչ թէ շատ տեղեակ անձեր էին: Ուստի որոշուեցաւ փոքրիկ եւ մասնաւոր քուէարկութիւն մը կատարել, և դատան բաղդը որո՛ւ որ վիճակէր, այն անձը լուղակի տարազով անձամբ ծովուն այդ սոսկալի վայրը պիտի այցելէր եւ երկուքուկէս վայրկեան պզտիկ քննութիւն մը կատարելէ վերջ արդիւնքը պիտի տեղեկագրէր: Հոս փակագիծի մէջ չի մոռնամ ըսել թէ ներկաներէն ամէնքն ալ լողալու մէջ տեսական թէ գործնական բաւականաչափ հմտութիւն ունէին:

Այս քուէարկութիւնը 1885 տարւոյ ամրան տօթակէզ եւ երաշտ օրերէն մէկուն մէջ տեղի ունեցաւ, օր՝ ուր միջօրէի արեւը իր ոսկի թելերը ուղղահայեաց կերպով կր խրկէ Մեռեալ ծովուն յատակը, որուն արդիւնքը կ'ըլլայ 90 աստիճանի մօտ հսկայ տաքութիւն մը, որ մեծ մասամբ ջուրէ եւ աղէ այդ մեծ բաղակցութիւնը կ'արտադրէ: Արդ, այսպիսի իրողութեանց վերահասու ըլլալով՝ խոնարհաբար առաջարկեցի թէ վիճակը որո՛ւ որ ինչայ ձմրան սկիզբը մտնէ ծովը, որովհետեւ հաստատուած է որ այդպիսի ջերմ մակերես ունեցող ջուրի ահագին տարածութեան եթէ ոչ յատակը, գոնէ մինչեւ կէսը իսկ սուղելու համարձակող արարած մը շնչահեղձ կ'ըլլայ:

Անշուշտ կը հետաքրքրուիք գիտնալ թէ ծովէջքի քուէն որո՛ւ վիճակեցաւ: Պիտի ըսեմ: Մինչ քուէարկութեան սկսելու ժամը հասած էր, ամէն ոք անթարթ աչքերով ուշադիր ականարկներ կը նետէր իր շուրջը, մանրերկրորդ մը առաջ արդիւնքին տեղեկանալու համար: Ի՞նչ լուրջութիւն մը կը տիրապետէր ամբողջ սենեկին մէջ, եւ քուէարկութեան գործողութիւնը տակաւ իր կատարին հասնելու մօտ էր. շնչառութեան գործարանները կարծես վայրկեանի մը համար դադրած էին զբաղումէ, եւ ժամացոյցին միօրինակ թիքթաքը եւ սրտերու մշատեւ տրոփը տեղի կուտային պահ մը առաջ տեղի ունեցող աղմուկին եւ բուռն վիճաբանութիւններուն. խորհրդաւոր լռութիւն, արդարեւ:

Բայց... անիծեալ վայրկեան, դժբաղդութիւն: Մեծ ցաւ մը եւ միանգամայն սարսափ մը զգացի, երբ ժողովակին նախագահը Պարոն Ն... լուրջ դէմքով եւ ազդու շեշտերով յանկարծ սա տողերը արտաբերեց, տողեր՝ որոնց ամէնքն ալ ինծի կ'ուղղուէին. — « Բարեկամ, բարեբաղդաբար քուէն ձեզի վիճակեցաւ. կը յուսամ որ չպիտի խնայէք ձեր ջանքը սոյն կարեւոր խնդիրին լուսարանութեանը մասին: »

Ինչպէ՞ս կրնայի ջանքս խնայել. ինչպէ՞ս կրնայի մերժել. պէտք էր գործադրել, պէտք էր ուխտադրուծ չըլլալ. Այն օրէն սկսայ տակաւ պատրաստութիւններ տեսնել: Նախ առի այն ամէնը որ լուղորդի մը համար խիստ կարեւոր էր. յետոյ տասնեւիններորդ դարու վերջին քառորդին Պորտոյի մէջ շինուած քառջուէ օդակ մը. « փրկութեան մանեակ » յորջորջուած: 80 կրամ ծանրութիւն ունեցող սոյն մանեակը լուղորդներ վիզերնուն կ'անցընեն, եւ երբ վտանգի մը կամ խոչընդոտի մը հանդիպին, անմիջապէս փոքրիկ դռնակ մը բանալով՝ զայն կը լեցնեն օդով, 480 լիպրա ծանրութեամբ, որով միջին կշռով մարդ մը կարող կ'ըլլայ ծովուն մակերեսը իր հաւասարակշռութիւնը պահել:

Այս նախապատրաստութիւններով չի գոհացայ սակայն, որովհետեւ հասարակ ջուրերու հետ չէր գործս, այլ ջուրի բաւական մեծ կակ քանակութեան մը հետ, որ 25 առ հարիւր աղ պարունակելու առաւելութիւնը ունէր ուրիշներէն, ուստի անբնական չէր որ վերը յիշած նախահոգութիւններու վրայ չի վրստահէի լիովին: Ուրեմն իմ պատուերիս համեմատ սուղելու ատենս ձախ ձեռքս բաւական դիմացկուն եղող կամ կարծուող չուանով մը պիտի կապէին, եւ երբ ծովուն յատակը անհանգըստութիւն մը զգայի, չուանը անմիջապէս պիտի պրկէի, եւ ասիկա անոնց նշանակ մը պիտի ըլլար հասկնալու թէ զիս վեր քաշելու ատենն էր:

Նոյն տարուան (1885) նոյեմբերի 27ին, ժամը ճիշդ ինը քառորդ անցած (Ը. Թ.) ապակեայ դիմակը գլխուս առաջակողմը, փրկութեան մանեակը վիզս, եւ դաստակս չուանով մը կապած՝ բարեկամներուս ներկայութեանը ճողփիւնով մը սկսայ վայրէջքս: Վայրէջք. ո՛հ, որչա՞փ հեռու էր ինձ համար այժմ այդ բառը իր բուն նշանակութիւնը տալէ. բայց վայելք թէ վտանգ սփառուած էի ի կատար հանել:

(Մնացեալը յաջորդ թիւով)

Ս. ՄԱԹԻԿԵԱՆ



Abbas I. — Abcès

Abbas I (dit le Grand), Մեծն Ապպաս Ա. — Սէֆիզներու ցեղէն Պարսից Շահ Իւզպէկներու ցեղը երկար ժամանակէ ի վեր իսրասանն ու շրջակաները կ'աւերէր։ Ապպաս նուաճեց զայն, հպատակեցուց նաեւ Պարսից ծոցին մէջ գտնուած կղզիները ։ Պատուիրակութիւն մը զրկեց Եւրոպա՝ պետութիւններու հետ դաշնադրութիւններ կնքելու համար ։ Ատկէ վերջը կ'սկսի Պարսկաստանի մէջ անանկ բարօրութիւն եւ բարգաւաճում մը որ անկից առաջ տեսնուած չէր ։ Ապպաս Շահը իրեն մայրաքաղաք ընտրեց Իսպահանը և զարդարեց զայն գեղեցիկ շէնքերով ։ Իր հպատակութեան տակ գտնուող բոլոր Բրիտոնեաներուն կրօնական կատարեալ ազատութիւն շնորհեց ։ Պարսից պատմութեան մէջ կարեւոր անուն մը ունեցած է ։

Abbas-Pacha Hilmi, Ապպաս Հիլմի Փաշա. — Եգիպտոսի արդի իստիվը. ծնած է 1874ին ։ Մէհմէտ Թէվֆիգ փաշաի եղբայրն է. ուսումը առած է Վիէնայի մէջ ։ Երբ հայրը մեռաւ (1892), երիտասարդ իշխանը Գահիրէ գնաց, ուր Մարտ 26ի Կայսերական Ֆէրման մը զինքը իստիվ կ'անուանէր ։ Կարգ մը տուրքեր թեթեւեղելով կամ ջնջելով՝ արժանացաւ գերագոր պետութեան և ժողովրդեան համարումին ։ 1893 Յուլիսին, առաջին անգամ այցելեց Պոլիս, ուր արժանացաւ Կայսերական մեծարանաց ։ 2 տարի վերջ երբ առաջին նախարար Նուպար փաշա հրաժարեցաւ՝ Մուսթաֆա Ֆէհմի փաշան նախարարապետ անուանեց ։

L'Abbé Constantin, Աբբա Բօնսթանքեն. — Լիւտովիկ Հալէվիի վէպը (1882ին գրուած) ։ Իր ամենամեծ յաջողութիւնը կը պարտի սա՝ պարագային թէ հրապարակ ելած ժամանակ նիւթապաշտութիւնը իր գազաթնակէտը հասած էր և այդ դպրոցին առթած ծայրահեղութիւնները ալ զգուանք կ'աղղէին ։ — Ծերուկ արքա մը որ աղքատներուն նախախնամութիւնն է. Ամբրիկաէն եկած հարուստ Տիկին մը որ երիցատուն կը յաճախէ և որու ամէնօրեայ սեղանակիցն է արքան. Երիտասարդ տեղակալ սպայ մը որ Տիկինին քով հետ կ'ամուսնանայ. Աստուառի ու Նանաի լպիրշ բարքերուն քով ասիկա հանգրուան մը կը ձեւացնէր ։ Այս վէպին մէջ երկրորդական անձնաւորութիւններն ալ պարկեշտ են. ագնիւ նօտար մը, ծերուկ Բօլին սպասուհին և ընկերական երիտասարդ մը որ յիմարութիւններ չըներ. — Օր. Ե. Օտեան Հայերէնի թարգմանած է այս վէպը ։ — Սոյն պատմութենէն Գրէմիէօ և Տէքուրաէլ երեք արարուածով ու արձակ թատրերգութիւն մը գրած են որ մեծ յաջողութիւն գտած է ։

Abcès, Խղիայք. — Շարաւաղից ուռ մըն է որ կը գոյանայ մորթին տակ կամ գործարաններէն մէկուն մէջ ։ Երեսկունկ կազմուած կամ քիչ տարածութիւն ունեցող խղիայթ մը անվնաս է, իսկ անոնք որ կենսական գործարանի մը մօտերը կամ միսին խորերը կը կազմուին՝ կրնան աղետաբեր հետեւանքներ ունենալ ։ Կոկորդին մօտ կազմուած խղիայթ մը կրնայ չնչառութեան ար-


Abdomen

գեղք ըլլալ և մինչեւ անգամ շնչահեղձութիւն պատճառել . կուշտի կամ որովայնի մէջ ձեւացած խղիւղայթ մը կրնայ դէպի ներս բացուիլ և կողատապ, ցնցղատապ եւայլ հիւանդութիւններու առիթ տալ : — Միսին մէջ թափանցող մանրէական հունտերով լի ունէ մարմին Զեւմ խղիւղայթի մը պատճառ կ'ըլլայ . կրնայ ըլլալ որ այդ հունտերը առաջուրնէ գոյութիւն ունեցած ըլլան, այն ատեն պարզ գրգռում մը կը բաւէ նոյն տեղը խղիւղայթ մը յառաջ բերելու : Պատճառը ինչ որ ալ ըլլայ, ջերմ խղիւղայթի մը կազմութեան ժամանակ սոյն երեւոյթները կը դիտուին . հիւանդ մասին վրայ ամէնէն առաջ խուլ ցաւ մը կոտտում մը կ'զգացուի, բոլորտիքի միտերը զարկի պէս թրթռում մը կ'ունենան, յետոյ կ'սկսին քաշուիլ . ինչ շարժում որ ալ տրուի՝ ցաւը ալ աւելի կը սաստկանայ, Հիւանդը տաքութիւն մը կ'իմանայ այդ տեղին վրայ, և եթէ մէկը ձեռքը հոն դնէ կ'զգայ այդ տաքութիւնը : Խղիւղայթը կազմուած մասին վրայ մարմինը ձեւէ կ'ելլէ և խղիւղայթին մեծութեան համեմատ խոշոր այտուց մը կը ձեւանայ : Վերջապէս մորթը կը կարմրնայ, սահուն ու փայլուն լիւրջայ : Խղիւղայթ մը կազմուած ժամանակ միշտ դէպի դուրս կողմ կը ձգտի և մորթը կը բարակնայ, վախճանը հասած է : Այս վախճանը բնականօրէն երկու կերպով տեղի կ'ունենայ . կամ խղիւղայթը ինքնիրեն կը տարտղնի առանց հետք մը ձգելու (ասիկա ամէնէն յաճող կերպն է) և կամ մորթը երթալով կը բարակնայ և տեղէ մը պատռելով պարունակութիւնը դուրս կը հոսի : Այն ատեն խղիւղայթը դուրս կախուած գրպանի մը ձեւը կ'առնէ լի շարաւով . այս գրպանը կաղմող մորթը անկանոն ձեւ մը ունի, խղիւղայթին պատռելէն վերջը կը ծածկուի մօտ ու կարմիր պալարներով որոնք կը լեցնեն վէրքին բացուածքը և ա՛յլ եւս անշնջելի կը մնան : Իբր դարման խղիւղայթին երկու կերպ վախճաններէ մին փութացնելու է, եթէ կը յուսացուի որ ինքնիրեն կը տարտղնի, վրան թեթեւ հականեխիջ նիւթեր կը դնեն, ինչպէս ասիս Ֆեհիֆով կամ սիւպլիմեով թրջուած բամբակ : Երբ կը տեսնուի որ խղիւղայթը կազմուեր է ու մէջը չարաւ կը պարունակէ, մորթը հերձակով մը ճեղքելու է : Սովորաբար մորթը ճեղքելէ ետքը կազմուած գրպանի մաշկը ամբողջովին կը հանեն, որով պարզ վէրքի մը կը փոխուի խղիւղայթը : — Պաղ խղիւղայթը կը տեսնուի ամէնէն աւելի տղոց, կիներու, աւշային կամ խոյլոտ կազմուածք ունեցող անձերու վրայ : Ամէնէն առաջ առանց տաքութեան կարծր ուռեցք մը յառաջ կուգայ մորթին բնական գոյնովը : Կամսց կամաց մէջտեղէն դուրս կը ցցուի սուրճու պղզտիկ պալար մը . ուր կը կակուղնայ, մանիշակագոյն կը դառնայ, թեթեւ ցաւ մը կ'զգացուի և ուռեցքը կը ծակի : Իբր դարման կլիստրիմով կը լուան, շարաւը դուրս կը ծծեն բացուածքէն, հիւանդին իւզոտ կերակուրներ կը կերցնեն, Մօրիւ ձկան իւղ կը խմցնեն, եւլն :

Abdomen, Որովայն . — Մարդու և ստնաւորներու իրանը երկու մասերու կը բաժնուի՝ Կուրծքը և Որովայնը, որոնք իրարմէ անջատուած են Ստոմանիով : Որովայնը պարփակուած է վարի

Abdomen

կողմէն կոնքով, կռնակի կողմէն՝ Միջային ողնասիւնով, իսկ առջեւէն ու կողերէն՝ իւղոտ ու մկանային խաւով մը: Ներքին կողմը ծածկուած է Պորսմաշկով որ կը պատէ փորոտիները և անոնց շարժումները կը կանոնաւորէ: Որովայնին մէջ կան Ստամոքսը, Աղիքները, Փայծաղը, Լեարդը, Բանքրէտը, Երիկամաւորը: Որովայնը նախակազմ է տղուն քով. կնոջ հրովայնը աւելի մեծ ծաւալ կ'ունենայ քան մարդունը: — Սողուններուն ու երկակենցաղներուն որովայնը զատուած չէ կուրծքէն: Զուկերը կրծային մասնաշունհաւով Որովայնը կը պարփակէ աննդառու-



ՈՐՈՎԱՅՆ

թեան և ծննդական՝ գործարանները: Յօդաւոր կենդանիներու (իջրաց առեալ Բազմոտները) մարմինն երրորդ օղակը կը ձեւացընէ՝ որ մամուկներու և միջատներու քով ամենամեծ ծաւալ մը կ'ունենայ: Իսկ խեցեպատեաններու որովայնը շատ պզտիկ պոչի մը ձեւով ծալուած է գլխաւանջի մէջ: Ճաճանշաւոր կենդանիները թուն Որովայն ըսուածը չունին: — Որովայնի մասին մէջ տկարութիւն մը ունեցող մէկը կեցած կամ պառկած վիճակին մէջ անանկ դիրք մը կ'առնէ որ որովայնին մկանները թուլ կը մնան: Եթէ կեցած է՝ դէպի առաջ հակած կը քալէ, պառկած տեղը ինքիր վրայ դարձած կծիկի մը ձեւը կ'առնէ: Դէմքը կը գունատի. ռնգա-չրթնային ծալքը ալ աւելի կը շեշտուի. քիթը բարակցած տեսք մը կ'առնէ: Դէմքին արտայայտութիւնը տխուր և կծկուած է: Բազկերակի զարկը արագ ու կարճ է:

Abeille

Abeille, Մեղու. — Թանթաթեերու կարգէն և մեղուազգիներու ընտանիքէն միջատներ են ասոնք մեղրաբեր և խումբով ապրող : Դիւրաւ կարելի է ճանչնալ զանոնք իրենց սեւ, փայլուն մարմինէն որ ծածկուած է մոխրագոյնի զարնող մազերով և ոտքերնուն մասնաւոր ձևէն որոնց վրայ քիչ մը ետքը պիտի խօսինք : — Ամենէն փանօթ տեսակն է Աբիա Մէլիֆիքա ըսուածը որ տարածուած է




ՄեղՈՒՆԵՐ. — Գործաւոր

Թագուհի

Արու

Սպանիոյ, Բորթուկալի, Իտալիոյ, Յունաստանի, ՓոքրՍիւիոյ, Ալ-ժէրիոյ, Բարեյուսոյ գլուխի և Հիւսիսային Ամերիկայի մէջ : — Մեղուներու երամ մը կը բաղկանայ 2-300 արուններէ, 10-30,000 ոչ-բեղմնաւոր էգերէ որոնք Գործաւոր մեղուններն են և մէկ բեղմնաւոր մեղուէ որ Թագուհի կամ Պարսմայր կը կոչուի : — Գործաւոր մեղուններուն պաշտօնն է ծաղիկներուն վրայէն հաւաքել մեղրն ու բեղուն փոշին և պատրաստել մեղրամօմը որոնցմով կը



ՄեղՈՒՆԵՐՈՒ ՈՏՔԵՐԸ. — Ա. Գործաւոր մեղուններու ոտքը (զրսի կողմէն) Գ. Զամբիւղ : — Բ. Նոյն ներսի կողմէն : Բ. Վրժին : — Գ. Թագուհի : — Դ. Արու մեղու


չին են բլիջներ՝ աւարնին մէջը պահելու համար : Հաւաքիչ գործիներն են բերանը և ետեւի ոտքերը : այս վերջինները մասնաւոր ձև մը ունին : սրունքները տափակ ու լայն են՝ տեսակ մը եռանկիւնի տախտակի պէս : դուրսի երեսը խռոշ մը ունի՝ Զամբիւղը, որու մէջ կը մթերուի հաւաքուած բեղուն փոշին : Զամբիւղին պարունակու-

Abeille

Թիւնը չլծափելու համար, բացուացքը կը գոցէն կարգ մը կարծր մազեր: Ոտքին ունի առաջին հատուածը չափազանց մեծցած է և առջևի կողմէն սրունքին կցուած, այնպէս որ ունի և սրունքին ետևի ծայրերը ունելի մը կը ձևացնեն որ մեղրամոմը բռնելու կը ծառայէ: Սրունքին ներսի երեսին վրայ կարգ կարգ մազեր կան շատ խիտ բուսած: ասոնք կը ձևացնեն վրձինը: Հունձքի ժամանակ նեղ, դժբախտ կտրուած ծայրով դունջերնուն միջոցաւ կը ճեղքեն ծաղիկներուն տակաւին գոց սրսիկները և բեղուն փողին դուրս կը քաշեն, առջևի ոտքերնուն միջոցաւ, որոնք ձեռքի պէս կը գործեն, այս փողին կը լեցուի զամբիւղներուն մէջ: Վրձինին պաշտօնն է՝ ծաղիկներուն վրայ թափթփած բեղուն փողիները հաւաքել: Մեղրը էապէս կազմուած և ծաղիկներուն մէջ գոյացած անուշ հեղուկէն (նեքտար): Բեղունները կը լիզեն զայն ստորին շրթունքին և ծամելիներուն միջոցաւ, ու կլլելով զայն կ'արտաբերեն յատուկ պարկի մը մէջ: Հոն, այդ հեղուկը ձևափոխութիւններ կը կրէ և երբ մեղուն փեթակ կը հասնի մեղրը կազմած դուրս կուտայ: Մեղրամոմը պատրաստելու համար մեղուն պէտք չունի դուրսէն նւթեր հաւաքել, ինքն է որ կ'արտադրէ զայն: Կենդանիին փորին կողմը որովայնի օղակներուն մէջտեղերը յառաջ կուգայ մոմը թերթիկներու ձևին տակ: Բեղուն ետևի ոտքերուն ձևացուցած ունելիներով կը բռնէ և բերնին մէջ թուքին հետ շաղկէ էտքը ուզած տեղը կը փակցնէ: թագունի մեղուն կամ արգասաւոր էգը՝ գործաւոր մեղուէն աւելի խոշոր ու երկայնահասակ է, հաւաքիչ գործարանները, կատարելիք կարևոր պաշտօն մը չունենալով շատ քիչ զարգացած են: Արունքունը գլուխը ծուռ է և չէ թէ ուղղահայեաց, աչքերը խոշոր են, հասակին՝ էգ մեղուէն քիչ մը աւելի երկայն, բայց աւելի բարակ է: Ասոնք զրկուած են խայթող գործարանէն. մինչդեռ բոլոր էգերը՝ պարամայր կամ գործաւոր մեղու, որովայննուն ծայրը հաստատուած ունին թոյն արտադրող գործարան մը: Այդ գործարանը կը բաղկանայ 1. Երկհիւղ խողովակի ձևով գեղձէ մը որու արտադրած հեղուկը թթու է, կը պարունակէ կեդրոնացած մըրնական թթու և կը հաւաքուի տանձաձև ընդունարանի մը մէջ, 2. Պարզ խողովակ մը ձևացնող գեղձի մը որուն արտադրութիւնը ալքալէն է և ուղղակի խայթոցին ստորոտը կը հաւաքուի, 3. Բուն իսկ խայթոցէն որ պատեանի մէջ ամփոփուծ երկու ասեղներէ ձևացած է: Ասեղներուն յատակը ջրհանի մը պէս կը շարժի և երբ խայթոցը միսին մէջ թափանցէ, թոյնը կը հոսի վէրքին մէջ: Մեղունին խայթոցը ծածկուած է մազմզուքներով և երբ կենդանին մէկը խայթէ շատ քիչ անգամ կը յաջողի ազատել իր գէնքը: Գրեթէ միշտ վերքին մէջ կը կոտորի ան, և մեղուն ալ քիչ ետքը կը սատկի: Մեղունի խայթումը մը դարմանելու համար պէտք է ամենէն առաջ խայթոցը դուրս քաշել զգուշութեամբ, յետոյ վէրքը լուալ պաղ ջուրով որուն մէջ եթէ կարելի է քանի մը կաթիլ քացախ, ասիտ ֆէնիք և կամ ամօնեաք դնել: Եթէ ցաւը խիստ շատ է կարելի է անզգալի ընել զայն 100 ին 5 fcorհիսրաթ sp fofաին լուծուած ջրով: Մեղուններու երամ մը փեթակի մէջ հաստատուած

Abeille

պահուն միմիայն թագուհիէ մը և գործաւոր մեղունքէ կը բաղկանայ. նախ կ'սկսին փեթակին ծակուծուկը գոցել. յետոյ կը ձեռնարկեն մեղրամոմէ խորիսիներուն շինութեան: Խորիսիները ուղղահայեաց դիրքով շարուած են կարգ կարգ և իրարու զուգահեռական: Ասոնց եզերքները անկանոն կ'սկսի առանց բլիշի, յետոյ կուգայ կարգ մը բլիշներ՝ հորիզոնական դիրքով և առանց կանոնի շարուած. ասոնցմէ ետքը կ'սկսին բուն իսկ բլիշները՝ որոնք իրարու քով շարուած վեցանկիւնիներու ձևը ունին: Այս բլիշները երկու մեծութեամբ կ'ըլլան՝ պզտիկներուն մէջ՝ (ա) գործաւոր մեղուներու հաւկիթները կը դրուին, իսկ մեծերուն (բ) մէջ արուններունը: Իսկ ե մեծ բլիշին մէջ կը պահուի թագուհի մեղիէին հաւկիթը: Սովորական փեթակներուն մէջ բլիշներուն թիւը 50



ՄԵՂՈՒՆԵՐՈՒ ԽՈՐԻՍԻ ՄԸ

հազարի մօտ կ'ըլլայ և շինութիւնը 5 կամ 6 օրէն կ'աւարտի. — Փեթակը և մեղրամոմէ բլիշները պատրաստուելէ ետք կարգը կուգայ զանոնք լեցնելուն: Գործաւոր մեղունքերը կը մեկնին մեղրու բեղուն փողի հաւաքելու, այս նիւթերուն մէկ մասը կը գործածուի առօրեայ սննդառութեան իսկ մնացեալը կը պահուի բլիշներու մէջ. երբ բլիշ մը կը լենայ՝ վրան մօմի թերթով մը կը փակեն: Փեթակին մէջ հաստատուելուն քանի մը օր ետքը, թագուհին կէս օրի մը կը մեկնի և օդին մէջ կը բարձրանայ. բոլոր արունները ետեէն կ'երթան. քիչ յետոյ ետ կը դառնայ՝ ամբողջ կեանքին, այսինքն 4 կամ 5 տարուան համար արգասաւորուած ըլլալով: Յաջորդ օրուէն կ'սկսի ածումը. իւրաքանչիւր բլիշի մէջ 2 միլիմետր մեծութեամբ, երկար հաւկիթաձև կապոյտի զարնձղ ձերմակ գոյնով հաւկիթ մը կը զետեղէ: Այս ածումի տեւողութեան միջոցին, որ ամբողջ ամառը կը տեւէ, թագուհին բոլոր գործաւոր մեղուններուն խնամքին ու հոգածութեան առարկայ կը դառնայ. իր միակ պաշտօնը հաւկիթ ածելն է որոնց թիւը մէկ տարուան մէջ մինչև 50 կամ 60 հազարի կը հասնի: Առաջին

Abeille

տարին հաւկիթներէն միմիայն էգ մեղուններ կ'ելլեն։ Ածումէն անմիջապէս ետքը գործաւորները՝ մեղրէ, բեղուն փոշիէ և ջուրէ պատրաստուած մասնաւոր խմոր մը կը բերեն հաւկիթին քովը կը դնեն։ Երեք օր ետքը հաւկիթը կը ճաթի և ծնունդ կուտայ առանց ոտքի, ճերմկոտած գոյնով թրթուրի մը որ անյագօրէն կը լափէ իրեն բերուած բոլոր անունդները։ Թրթուրը շուտով կը մեծնայ, առանց ո եւ ձեւափոխութիւն կրելու, մինչեւ 6—7 օրէն կատարեալ հասակը առնէ, այն ատեն գործաւորները մոմով կը գոցեն բլիջին բերանը և ներսի կողմէն ալ թրթուրը կ'սկսի հիւսել չիկագոյն մետաքսէ իր անկատար բժոժը։ Երեք օր ետքը թրթուրը հարսնեակի կը փոխուի և 7 օր եւս անցնելէ վերջ, այսինքն հաւկիթին ածումէն 21 օր ետքը վերջին կերպարանափոխումը կը կատարուի և մեղուն՝ ծակելով մոմէ կափարիչը դուրս կը թռի բլիջէն և կ'երթայ միանալ իր անդրանիկներուն, որոնք գուրգուրանքով կ'ընդունին զինքը, վրան կը լիզեն, մեղր կը հրաւցնեն, նորածին մեղուն կամաց կամաց մասնակցիլ կ'սկսի փեթակի աշխատութիւններուն և տասն օր չանցած կը մեկնի դէպի զաշտերը մեղր հաւաքելու։ Այս կերպով փեթակի մը բնակիչները կը բազմանան չափազանց արագութեամբ, սակայն գործաւոր մեղուին կեանքը՝ ամառուան եղանակին մէջ՝ վեց ամիսէն աւելի չտեւելով, անոնց թիւը չկրնար աւելնալ որոշ սահմանէ մը անդին։ — Ձմեռուան մօտիկնալուն ածումը կը նուազի և ի վերջոյ բոլորովին կը դադրի. մեղուններն ալ դուրս չեն ելլեր և փեթակին մէջ կը փակուին իրարու վրայ դիզուած կծիկ մը ձեւացնելով. իրենց արտաշնչումէն գոյացած տաքութիւնը 10 աստիճանի բարեխառնութեան մը մէջ կը պահէ փեթակին մթնոլորտը։ Սառտիկ ցուրտերուն՝ մեղունները կը թռչտին փեթակին մէջ յատկանշական բզզիւն մը հանելով. զոր կարելի է դուրսէն իմանալ, եթէ փեթակին բարեխառնութիւնը մեղմանայ՝ կը բանան բլիջներուն բերանը և ամառունէ անոնց մէջ ամբարուած մեղրով կը սնանին մինչեւ որ գարունը հասնի և ծաղիկները բացուիլ սկսին. այն ատեն գործաւոր մեղունները կը մեկնին նորէն ծաղիկներուն հիւթը հաւաքելու և թագուհին ալ կ'սկսի ածումի. առաջին երկու ամիսներուն միմիայն էգ մեղուններու հաւկիթ կ'ածէ. անկէ ետքը՝ մայիսի և ապրիլի մէջ՝ ընդմիջաբար՝ մեծ բլիջներուն մէջ կը գետեղէ արու մեղուններու հաւկիթներ։ Երկրորդ տարուան մէջ այս ածումը կ'սկսի առանց թագուհին բեղմնաւորուիլ պէտք ունենալու։ Արու մեղունները բնաւ չեն մասնակցիր ո՛ր և է աշխատութեան, գործաւորուհիներու հաւաքածոյն է որ կը սնանին։ Ամբողջ ամառը այսպէս կ'ապրին առանց աշխատութեան՝ նոր թագուհի մեղունները արգասաւորելու համար. սակայն Օգոստոսի մօտիկները երբ ալ նոր երամ մը չի կազմուիր՝ էգերը կը յարձակին արու մեղուններուն վրայ և դանոնք կ'սպաննեն խայթոցովէին, և կամ կը թողուն որ փեթակին մէկ անկիւնը անօթութենէ մեռնին, — Երբ փեթակին բնակիչներուն թիւը չափազանց կ'աւելնայ, թագուհին դէպի ամենամեծ բլիջը կը դիմէ և անոր մէջ մասնաւոր հաւկիթ մը կ'ածէ. ատկէ

Abeille

ելլող թրթուրը յատուկ խմորով մը կը սնանի և կը մեծնայ արգասաւորութեան կատարեալ և ամբողջ գործարաններով. նոր թագուհի մեղու մըն է աս. նախորդ թագուհին փեթակին մեղուներէն մաս մը առնելով կ'երթան ծառի մը ճիւղէն կը կախուին ողկուզաձեւ իրար փակած: Իսկ փեթակը մնացած թագուհին արգասաւորուելով արուններէն, կ'սկսի նոր ածուցներու: Կրնայ ըլլալ որ մեղուններու թիւը նորէն չատնայ և նոր թագուհի մը ծնի, այն ատեն կը կազմուի երկրորդ երամ մը: Այսպէսով մէկ տարուան մէջ կարելի է որ երեք անգամ նոր երամ կազմուի: — Կրնայ ըլլալ որ փեթակի մը թագուհի մեղուն ո' եւ է պատճառով մը սատկի, եթէ բշիջներուն մէջ զարգացաւ վրայ եզոզ թրթուրներ կան, մեղունները անոնցմէ մին կ'ընտրեն եւ մասնաւոր խմորով մը սնուցանելով ճշմարիտ թագուհի միջու մը յառաջ կը բերեն, որ կարող է արգասաւորուիլ և հաւկիթ ածել: Իսկ եթէ բնաւ ածուած հաւկիթ չկայ բշիջներուն մէջ, մեղունները գործաւորուհի մը կ'ընտրեն և զայն կը կերակրեն մասնաւոր խմորով. այս նոր թագուհին առանց արգասաւորուելու կ'սկսի հաւկիթներ ածել, սակայն բոլորն ալ արու մեղուններու ծնունդ կուտան. եթէ մեղուարոյժը դուրսէն թագուհի մեղու մը բերելով չընտելացնէ, փեթակը կորսուած կը համարուի: (Մեղուարութեան, մեղուններու հիւանդութեան և անոնց դարմանումին համար տեսնել Apiculture բառը): — Հելլենական աւանդութիւն մը կ'ըսէ թէ Արգաստիոյ թագաւոր մը՝ Արիսթէ՝ հնարած է մեղուարութեան: Ուրիշ հեղինակներ, Սպանիոյ մէջ ապրող աւանդական ցեղի մը թագաւորին՝ Կորկորիսի կը վերագրեն մեղրին առաջին անգամ իբր սնունդ ու դեղ գործածումը: — Մեղուն խորհրդանշանն է իմաստութեան ու աշխատութեան եւ նուիրուած է Ապողոնի:

Abel (Nicolas Henri), Հանրի Նիփոյա Աբել. — Հռչակաւոր չափագէտ, Նորվեկիացի. ծնած է Ֆրինտօէի մէջ 1802ին, մեռած 1829ին: Կենդանութեանը ատեն իր արժանիքը չէ գնահատուած և ինք ամբողջ կեանքը անցուցած է յետին աստիճան չքաւորութեան մէջ: Ֆրանսական Կաճառին Չափագիտական մեծ պարգեւին արժանացած է Ժագոպիի հետ: Նորվեկեան կառավարութիւնը, անոր մեռնելէն ետքը բոլոր գործերը հաւաքած եւ իր ծախքովը տպել տուած է: Աբէլ հնարիչը եղած է Տարբերական, Հաշույն և Էական գիւտեր ըրած է Բարձրագոյն Հանրահաշույնի մէջ, ուր շատ մը տեսութիւններ իր անունը կը կրեն:

Aberdeen, Ապրսթիք. — Սկոտլոնդ ամէնէն վաճառաւոր քաղաքներէ մին, նաւահանգիստ Տիի վրայ, 132 հազար բնակիչ ունի: Նշանաւոր են բամբակեղէնի, ասուեղէնի, բրդեղէնի եւ թուղթի ինչպէս նաեւ նաւաշինութեան գործարանները. ունի համալսարան մը. անուանի շէնքերն են Ս. Մարկոսի Մայր եկեղեցին որ ԺԴ. դարուն մէջ շինուած է և Արքայական Ուսումնարանը որ 1494ին հիմնուած է: — Նոյն անունով կան նաեւ

ՏԱՐԻ ՄԸ ՍԱՌՆԱԿՈՅՏԻՆ ՎՐԱՅ

(Շարունակութիւն 1ին թիւէն)

« Գառորդ ժամ մը անցաւ, կը շարունակէ Ապրուճայի դուքսը, սառնակոյտին վրայէն ծովեզերք գլորելէս ետքը,՝ քառորդ ժամ մը որ ահագին դարի մը չափ տեւեց՝ կարծես, երբ տարտամ լոյս մը տեսայ և մոլթին մէջ կարողացայ նշմարել բարձրահասակ մարդու մը ուրուագծերը. Բեթիժաքսն էր որ քովս կը հասնէր միւս ընկերներուն ու բալխիրներուն հետ ։

« Սկսանք ճամբանիս գտնելու աշխատիլ. Բեթիժաքս առջեւէն կը քալէր. ամէն վայրկեան լապտերնիս կը մարէր հովէն, և կ'ստիպուէինք կանգ առնուլ և բոլորտիքը շարուիլ նորէն վառելու համար ։ Ճամբայ մը որոշեցինք և փորձեցինք այդ ուղղութեամբ



յառաջանալ, բայց շուտով ստիպուեցանք ետ դառնալ. ամէն քայլերնուս՝ սառը ոտքերնուս տակ ճեղքեր ու ծակեր կը հասնէր ։ Մութը եւ ոլորապտոյտ դարձող ձիւնը չէին թողուր որ քայլ մը հեռուն տեսնենք. գրեթէ անկարելի եղեր էր յառաջանալ այդ ցից գետնին վրայ ։

« Հազարումէկ չարչարանքներէ ու նեղութիւններէ վերջը կարողացանք ինկած ծակերնուս դուրս ելլել աւելի հաստատուն

ու տափարակ սառնակոյտի մը վրայ: Բայց ատով ազատուած չէինք ըլլար: ըստ բաղդին կը քալէինք առանց գիտնալու թէ ո՞ր կ'երթանք: Ձիւնը թարթիչներնուս վրայ կը սառէր և ստիպուած էինք ուժով մը չփելով վար թափել սառի այդ խաւը որ աչքերնին բոլորովին կը ծածկէր: Վախ մը պատեց զիս թէ բաւական երկար ժամանակ՝ այդ ցուրտին ու խաւարին՝ բաց օդին պիտի մնանք: Բարեբաղդաբար երկինք պայծառացաւ, լուսաւորները նշմարուիլ սկսան. ճանչցանք անոնցմէ մին և ճամբանիս անոր համեմատ ուղղեցինք: Քիչ ետքը հեռուէն զարնուող զանգակի մը զօղանչը լսեցինք տարտամ կերպով մը: Վրանին տակ մնացող ընկերները, մտատանջելով մեր բացակայութեան երկարութենէն նշանի զանգակը կը հնչեցնէին ճամբանիս գտնել տալու համար:

« Կորուստնիս շատ մեծ բան մը չէր. շուն մը սառնակոյտէն վար գլորած ժամանակ վիրաւորներ էր և երկու բալխիրներ ալ ստիպուեր էինք ճամբան թողուլ: Կ'ուրախանայի այսքան չնչին կորուստով մը ազատելնուս համար, երբ ձեռնոցներս հանելով ցաւագին անակնկալը ունեցայ տեսնելու թէ ձախ ձեռքիս մատները մասամբ սառած են »:

Պատահած դժբաղդութիւնը դուքսին կարծածէն աւելի ծանր էր: Հարկ եղաւ ձախ ձեռքին երկու մատերը կտրել:

Ի՛նչ տարօրինակ պարագաներ ու արտակարգ միջավայր են ասոնք՝ մարդուս սրտին զուարթութիւն պարգեւելու համար: Եւ սակայն այս զարհուրելի պարագաներու տակ իսկ, բեւեռախոյզները տօնեցին, կրցածնուն չափ մեծ շուքով, Ծնունդի ու Կաղանդի օրերը: Ծնունդին գիշերը նաւուն վարպետ խոհարարը յաջողեցաւ, քանի մը սառած հաւկիթներով ընթրիք մը պատրաստել, որ խեղճ զրկեալներուն սքանչելի թուեցաւ: Կաղանդին օրը երբ ժամը կէս գիշերուան տասներկուքը զարկաւ, « նաւուն պզտիկ թնդանօթով, կը գրէ Ապրուձաի դուքսը, ողջունեցինք նոր ծագող տարին, նաւաստիները հրթիռներ արձակեցին և վրանին շուրջը բեթրոլով թրջուած փայտի խուրձեր բռնկցուցին »: Ի՛նչ վեհութիւն չառներ այս թշուառ արարածներուն աչքին՝ նոր տարիի մը յայտարարութիւնը որ այնքան տառապանք ու վիշտ կը խոստանայ իրենց և որու վախճանը իրենցմէ մէկքանին գուցէ չպիտի տեսնան:


Յառաջ դէպի անճանօքը. — Անոնք որ կը մնան. —

Սպասումի անձկութիւնները

Յունուարի վերջերը կը լմնայ բեւեռային գիշերը: Քանի մը չարաթներ ալ կ'անցնին վերջին պատրաստութիւնները մանրա-

կրկիտ ու խնամով կատարելու և կը հասնի Մարտի 11ը՝ երբ պիտի կատարուի ջարչաւանքը:

Սոյն արշաւանքին ամենէն էական գլխաւոր մասը՝ բալխիրով կատարուելիք լայն յառաջիւղացումն էր. ա՛յլ կրնաք երեւակայել



ի՛նչ վիշտ գգաց Ապրուձայի դուքսն երբ իրեն համար մեկնելու անկարելիութիւնը տեսաւ, ձախ ձեռքին վէրքն արգելք կ'ըլար. իրեն տեղը մեկնող խումբին գլուխն անցաւ հրամանատար Քանիք, հետն առնելով 13 բալխիրներ, 250 քիլօ սննդեղէն եւ 102 շուն:

Դուքսը հետը մնարեալ ընկերները Ֆլիկի հրուանդանին ծայրը կը հաստատեն իրենց վրանն՝ եւ հոն 33⁰ աստիճան ցուրտով մը կ'սպասեն զանազան կողմեր մեկնող խուզարկու խումբերուն վերադարձին. հովերէն ու քամիներէն չքշուիլ չտարուելու համար, ձիւներուն մէջ ահագին փոս մը մը պեղած ու բնակարանին հոն հաստատած էին, փոսին եզերքներն ալ ձիւնակոյտեր դիզելով պատ մը շինած էին, որպէս զի մրրկին ժամանակ նորէն չլեցուի. եւ այն ծակին մէջ կծկտած սպասեցին...


Սպասումն երկար տեւեց. Ապրիլ ամիսը կը վերջանար և Քանիկէ՝ որ ամսուն սկիզբները արբէն հասած ըլլալու էր, առաւին լուր չէր առնուած: Օրերը կ'անցնէին, Մայիսը կը լրանար, Յունիսի 10 կը հասնէր եւ Քանիք մէջտեղ չկար: Մեկնած ժամանակ քաջարի հրամանատարը հաշիւ ըրած էր որ հետն առած սննդեղէնները խնայելով կրնայ մինչեւ այդ թուականը դիմանալ. արդ տոյն յետին պայմանաժամն ալ անցեր էր: Արդեօք անոնց վերադարձին ամէն յոյս կորսնցնելով էր:

Սոսկալի ողիսականք. — Նանգեմե ասելի հիպոուն. —

Ծփումն սառնակոյսերու վրայ:

Վերջապէս Յունիս 23ին, իրիկուան դէմ, հեռուէն երկու բալխիրներ տեսնուեցան որոնք դժուարութեամբ կը յառաջանային: Քանիք եւ երեք ընկերներն էին, տառապազին, յոգնատանջ տեսքով:

(Յաջորդ թիւով Քանեիի արշաւանքին պատմութիւնը)



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ




Մեր «Պատկերազարդ Համայնագիտարան»-ին գրած ընդունելութիւնը անմասն է: Մօտակայ տեղերէ քաջալերական նամակներ ու յուսատու խօսքեր կ'ընդունին: Վստահ ենք որ հեռաւոր քաղաքներէ ալ, որ քերթիս առաջին թիւը դեռ նոր հասած է, նոյն համակրութիւնը պիտի վայելեն մեր այս նոր ձեռնարկին:

Բանի մը ազնիւ նամակագիրներ մեր ուշադրութիւնը կը հրաւիրեն կարգ մը կէտերու վրայ: Հրապարակաւ կը պատասխանենք անոնց նոր գրական մը տալու մեր ձեռնարկին յարատեւութեան եւ լրջութեան մասին:

Ամեն առաջ շատ քիչ կը գտնենք 4 էջերը: Մենք ալ նոյն կարծիքն ունինք եւ 1904ի սկիզբէն սկսեալ Հանրագիտակի իւրաքանչիւր քիւր 24 էջերէ պիտի բաղկանար, որու 8 էջերը Համայնագիտարանին յատկացնել. սակայն տպարանապետին երկարատեւ հիւանդութեանը պատճառաւ չկրցանք այս գաղափարն իրագործել. սակայն քիչ ատենէն Հանրագիտակի քիւրերն 24 էջերէ եւ 8 էջը պիտի յատկանայ Համայնագիտարանին:

Երկրորդ կը հարցնենք յարատեւութիւնը պիտի ունենա՞յ այս ձեռնարկն, որքան որ մեր կամէնք կախում ունենայ. Համայնագիտարանը պիտի շարունակենք, մինչեւ որ աւարտի: Մեր բոլոր հաշիւները առաջուրնէ ըսած, հարկ եղած ամէն ինչ առաջուրնէ պատրաստած ըլլալով, բնաւ ո՛ր եւ է անձնական պատճառ մը չունինք ընդհատելու եւ կիսատ թողելու այս ձեռնարկն:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ՄԵԾ. ԳՈՐԾԱԿԱՆԼՆԵՐՈՒՆ

Հանրագիտակ իր նոր Տարեշրջանին մէջ նոր բարեկամներ ալ կ'ստանայ, որոնք ազնուաբար պատրաստակամութիւն կը յայտնեն թերթն ա՛յլ աւելի տարածելու համար եւ ո՛չ մէկ զոհողութիւն խնայել: Ի սրտէ շնորհակալ ենք իրենց ազնուութենէն, ինչպէս նաեւ մեր միւս Մեծ. Գործակալներէն, որոնք երկու տարի անդադար Հանրագիտակի համար թանկագին ջանքերնին չի խնայելէ ետքը նորէն կը շարունակեն իրենց բարեկամութիւնը:

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի չորս-թական 20 էջէ բաղկացեալ:

Վեցամսեայ ու յոսամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր:

ԱՐԵՎԱՆԻ ԴԻՆԵԷ

Պոլսոյ համար

30 զրուշ

Գաւառաց

35 >

Արտասահման

45 >

Հատը

30 փարայ



ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդավոզ
 Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
 Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
 Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկերեան
 Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշեան
 Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
 Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
 Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
 Էրպա'ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
 Թալաս, Կարապետ էֆ. Դօճանեան
 Թեֆրեազ, Ասատուր էֆ. Արսէնեան
 Թրիպոլի Գրիգոր էֆ. Լ. Դարապաշեան
 Խարբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
 Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
 Կիրասոն Թովմաս էֆ. Դարապաշեան
 Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Խանդավոզ
 Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
 Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
 Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Գալ. Թաշեան
 Մարաշ, Արժ. Տ. Նէքսէս Գալ. Շահինեան
 Մարզուան Արամ էֆ. Դարապաշեան
 Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Դարապաշեան և Ընկ.
 Նիկովիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
 Նիքսար, Յովհաննէս էֆ. Փանոսեան
 Պարսիգալ, Ստեփան էֆ. Մակարեան
 Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
 Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
 Տիւրպէֆիր, Լեոն էֆ. Սրապեան
 Տրապիզոն Կոստաս էֆ. Զարիֆեան
 Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Հանրագիտակի այս և յաջորդ թիւերէն
 իբր նմոյշ կը խրկենք մեր բոլոր ծանօթնե-
 րուն, անոնք որ կը փափաքին բաժանորդա-
 գրուիլ, թող Հաճին մեզ իմաց տալ, իսկ ե-
 թէ չեն ուզեր՝ կը խնդրուի իրենցմէ թեր-
 թերէ մին ետ դարձնել վրան «իստէ» բառը
 գրելով.

ԽՐԱԿՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
 ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻԶ-ՀՐԱՏԱՐԱԿԻԶ
 ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆ

ՀԱՆՐԱԴԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պաղպաղեան
Ասանա, Յակոբ էֆ. Տ. Պողոսեան
Դօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւլկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Գ. Թաշեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Ձմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա'ա, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեֆրսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խաբերդ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրասոն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրին, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր յաճ. Թաշեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս ԲՃ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօյեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Բարակափուրեան և Ընկ.
Նիկոմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ագարեան
Նիսար, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Պարսիզակ, Ստեփան էֆ. Մակարեան
Սամսոն, Յովհաննէս էֆ. Նիքսարեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրքմէն, Լեոն էֆ. Սրապեան
Տրապիզոն Կոմիտաս էֆ. Զարիֆեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան

Հանրագիտակի այս և յաջորդ թիւերէն
իբր նմոյշ կը խրկենք մեր բոլոր ծանօթնե-
րուն, անոնք որ կը փափաքին բաժանորդա-
գրուիլ, թող հաճին մեզ իմաց տալ, իսկ ե-
թէ չեն ուզեր՝ կը խնդրուի իրենցմէ թեր-
թերէ մին ետ դարձնել վրան «իստե» բառը
գրելով.